**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03.02.01-22**

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

31.01.2022թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Վ. Գասպարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից և «Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ» ՊՈԱԿ-ը, ի դեմս հաստատության տնօրեն Գ. Մեհրաբյանի, ով գործում է հաստատության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրի շրջանակներում «Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ» ՊՈԱԿ-ի միջին տարեկան 245 սովորողների (առանց ընդունելության) ուսուցումը:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

**2.1** Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցումը կազմում է 78 499 000 (յոթանասունութ միլիոն չորս հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամ:

2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց Պատվիրատուները պարտավորվում է ուսանողական նպաստի տրամադրման ձևով իրականացնել ուսման վճարի փոխտրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

## 3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

## 4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրը գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | «Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ» ՊՈԱԿ |
| ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2 | Ք.Աբովյան, Հատիսի փողոց |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ՀՀ ՖՆ գործառնական վարչության |
| Հ/Հ 900011005460 | Հ/Հ 900108000564 |
| Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ | Տնօրեն՝ |
| _____ Վ. Գասպարյան (ստորագրություն) | _____ Գ. Մեհրաբյան (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |